ԼՐԱՄՇԱԿՎԱԾ

ԵՐԿՐԵՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-1217-16.12.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ Օրենք) 22-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.

«1.1. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում՝ գրավոր դիմում ներկայացնելով:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ից 6-րդ կետերով նախատեսված դեպքերում և 8-րդ կետով նախատեսված դեպքում, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքի ուժով, իսկ 7-րդ կետով սահմանված դեպքում ավագանին նիստին ներկա ավագանու անդամների ձայների երկու երրորդով ընդունում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում, կամ նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են արձանագրություն, որը հաստատվում է ներկա ավագանու անդամների երկու երրորդով:»:

Հոդված 2. Օրենքի 70-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.

«1.1 Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում ՝ գրավոր դիմում ներկայացնելով:».

2) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում և 6-րդ կետով նախատեսված դեպքում, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով

ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ Օրենք) 22-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.

«1.1. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում՝ գրավոր դիմում ներկայացնելով:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ից 6-րդ կետերով նախատեսված դեպքերում և 8-րդ կետով նախատեսված դեպքում՝, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են օրենքի ուժով, իսկ 7-րդ կետ~~ում~~**ով** սահմանված դեպքում՝ ավագանին նիստին ներկա ավագանու անդամների ձայների երկու երրորդով ընդունում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում, կամ նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են արձանագրություն, որը հաստատվում է ներկա ավագանու անդամների երկու երրորդով:»:

Հոդված 2. Օրենքի 70-րդ հոդվածում.

~~1) 4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում, իսկ 6-րդ կետով նախատեսված դեպքում ավագանու անդամի կողմից եռօրյա ժամկետում հրաժարականի դիմումը հետ չվերցնելու դեպքում համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:»:~~

1) **լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մաս.**

«1.1 Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում ՝ գրավոր դիմում ներկայացնելով:».

~~2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ մաս.~~

~~«6. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը կարող է հետ վերցնել այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով:»:~~

2) **4-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերով նախատեսված դեպքերում և 6-րդ կետով նախատեսված դեպքում, եթե սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չի վերցրել, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:»

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

« Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» (Պ-1217-16.12.2025-ՏՏԳԾ-011/1 , «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» (Պ-1217ˈ-16.12.2025-ՏՏԳԾ-011/1) ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագիծը, հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ 2-րդ հոդված	Հասկացությունների միատեսակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք ժամկետներին առնչվող կարգավորումները վերանայել:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
2	Կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել գործող օրենքի 70-րդ հոդվածի 1.1-ին մասի տեսքով՝ կարգավորումների տրամաբանական հաջորդականություն ապահովելու նպատակով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	

3	**Կառավարություն**	**«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված**	1. Հասկացությունների միատեսակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք ժամկետներին առնչվող կարգավորումները վերանայել:	**Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխությունները:**	**Ընդունվել է**
4	**Կառավարություն**	**«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում եվ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդված**	2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգավորումն առաջարկում ենք նախատեսել գործող օրենքի 20-րդ հոդվածի 1.1-ին մասի տեսքով՝ կարգավորումների տրամաբանական հաջորդականություն ապահովելու նպատակով:	**Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխությունները:**	**Ընդունվել է**